Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին հատկապես իսկ կերպով էր գիտակցում, որ անհրաժեշտ է արագորեն զարգացնել ֆիզիկա-մաթեմատիկական, քիմիական և տեխնիկական գիտությունները: Միաժամանակ նենց սկզբից ուղղություն վերցվեց այնպես անել, որ չկրկնվեն ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի համապատասխան հիմնարկությունների աշխատանքները և ամեն մի գիտության բնագավառում ունենալ սեփական, թեկուզև նեղ, բայց ինքնուրույն պրոֆիլ:

Կարելի է հաստատապես ասել, որ Հայրենական պատերազմի ծանր տարիներին ստեղծված մեր երիտասարդ ակադեմիան իր աշխատանքներում հիմնականում իրականացրեց այդ դիտավոր գիծը:

Այնուհետև ընկ. Վ. Հ. Համբարձումյանը կանգ առավ Սովետական Հայաստանի գիտության զարգացման կարևորագույն փուլերի վրա, խոսեց հայ գիտնականների այն ավանդի մասին, որ նրանք ներդրել են հայրենական գիտության զարգացման գործում:

«Մեծ Հոկտեմբերը և հայ ժողովրդի վերածնունդը» զեկուցումով հանդես եկավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատար, հանրապետության գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գ. Բ. Ղարիբջանյանը:

Ընդհանուր ժողովի հորելյանական նիստին ներկա էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Բ. Ե. Սարկիսովը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղարներ Պ. Պ. Աբիսիմովը, Հ. Մ. Ոսկանյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ռ. Ք. Սվետլովան, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Յա. Ի. Խաչիկյանը:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Հոկտեմբերի 25—27-ը Երևանում տեղի ունեցավ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և ազգային հարցի լուծումը» թեմայով գիտական կոնֆերանս, որը անցկացրին ՍՍՀՄ և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիաները. ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պատմությունը» կոմպլեքսային թեմայի գիտական խորհուրդը և նրա հայկական սեկցիան, սոցիալիստական երկրների գիտությունների ակադեմիաների բազմակողմանի գիտական համագործակցության «Մեծ Հոկտեմբերի պատմությունը և հետագա սոցիալիստական հեղափոխությունները» պրոբլեմային հանձնաժողովը:

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի, հանրապետության Գերագույն սովետի նախագահության և կառավարության անունից գիտական կոնֆերանսի մասնակիցներին ողջունեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Կ. Լ. Դալլաքյանը:— Կոնֆերանսն իր աշխատանքը սկսում է նշանակալից ժամանակաշրջանում,—ասաց նա: Վերջերս ընդունվեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության նոր սահմանադրությունը: Հատկանշական է, որ մեր կյանքի նոր հիմնական օրենքն ընդունվեց մեծ Հոկտեմբերի 60-ամյակի նախօրեին: Դա ըստ ժամանակի երկու խոշորագույն իրադարձությունների սոսկական զուգադիպություն չէ, այլ փայլուն վկայությունն այն բանի, որ Հոկտեմբերի գաղափարները, Լենինի պատգամները հաջողությամբ կենսագործվում են: Անդրադառնալով մեր երկրում ազգային հարցի լուծմանը, ընկ. Դալլաքյանը նշեց, որ սովետական բոլոր ժողովուրդների, երկրի բոլոր ազգերի և ազգությունների համար միավորիչ հզոր հիմք են դարձել նրանց պատմական նպատակների ընդհանրությունը, համատեղ հեղափոխական ավանդույթները, հայացքները, կենսափորձը, որոնք ձևավորել են առել համատեղ պայքարում և համատեղ աշխատանքով: Ինչպես նշել է ընկեր Լենինը, Իլյիչ Բրեժնևը, այնուհետև ասաց ընկեր Դալլաքյանը, ՍՄԿԿ-ն և սովետական պետությունը «լիովին են լուծել ազգային հարցը նրա այն կողմերով, որոնցով մեզ ժառանգություն էր մնացել նախահեղափոխական անցյալից: Բայց ազգային հարաբերությունները հասուն սոցիալիզմի հասարակության մեջ էլ մի այնպիսի իրողություն են, որ մշտապես զարգանում են, առաջադրում նոր պրոբլեմներ ու խնդիրներ: Կուսակցությունը մշտապես այդ հարցերը պահում է տեսադաշտում, ժամանակին լուծում դրանք՝ ելնելով ամբողջ երկրի և

յուրաքանչյուր առանձին հանրապետության շահերից, կոմունիստական շինարարության շահերից»:

— Հավատարիմ Վ. Ի. Լենինի պատգամներին,— վերջում ասաց ընկ. Դալլաֆյանը,— կուսակցությունը սովետական պետության զարգացումը անշեղորեն տանում է բոլոր եղբայր ժողովուրդների ինտերնացիոնալ միասնության էլ ավելի ամրապնդման ուղիով, ժողովուրդներ, որոնք միասնաբար առաջ են ընթանում դեպի կոմունիզմ:

«Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և պրոլետարական ինտերնացիոնալիզմը» զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս Ի. Ի. Մինցը: Նա նշեց, որ 60 տարի առաջ բոլշևիկների կուսակցության ապրիլյան կոնֆերանսում Լենինն ասում էր. «Ռուսաստանի պրոլետարիատին բաժին է ընկել հեղափոխությունն սկսելու մեծ պատիվը, բայց նա չպետք է մոռանա, որ իր շարժումը և հեղափոխությունը կազմում են համաշխարհային հեղափոխական պրոլետարական շարժման միայն մի մասը»: Այս դրույթը ուղեցույց է դարձել կուսակցության գործունեության մեջ: Մեծ Հոկտեմբերը համաշխարհային հեղափոխության սկիզբն է և բաղկացուցիչ մասը: Այդ բանի գիտակցումը և Հոկտեմբերի հոբելյանի լայն թափը հատկապես վախեցնում են միջազգային իմպերիալիզմին, ուստի քաղաքական ասպարեզում Հոկտեմբերի միջազգային նշանակության հարցի շուրջը նոր ուժով են բախվում հետադեմ ուժերը և առաջադիմություն, հեղափոխական շարժման ու սոցիալիզմի ուժերը: Ընդունել Հոկտեմբերի միջազգային բնույթը, նշանակում է համաձայնել, որ մենոդ իմպերիալիզմին անխուսափելիորեն փոխարինելու կգա նոր սոցիալիստական հասարակությունը:

Այնուհետև զեկուցողը կոնկրետ օրինակներով ցույց տվեց, որ սոցիալիզմը և ազգային հարցի լուծումը անբաժանելի են, որ միայն իշխանությունը պրոլետարիատի և գյուղացիության չքավոր խավերի ձեռքն անցնելու շնորհիվ պայմաններ ստեղծվեցին ազգային հնչման և ազգային անհավասարության իսպառ ոչնչացման համար, նախկինում ստրկացված ժողովուրդների բարգավաճման համար: Այստեղ նույնպես փայլուն կերպով դրսևորվեց Սովետական Միության պրոլետարական ինտերնացիոնալիզմը, որը ցույց տվեց ազգային հարցի լուծման օրինակ:

«Ազգային պրոցեսների հետագոտումը ՍՍՀՄ-ում» զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս Յու. Վ. Բրոմլեյը: Ազգային խայտաբղետության և տնտեսության բազմակացույթ բնույթի հետևանքով ցարական Ռուսաստանում ազգային հարցը առանձնահատուկ կարևորություն ուներ: Ուստի պատահական չէ, ասում է զեկուցողը, որ այդ կարևոր պրոբլեմը Հոկտեմբերի նախօրեին և սովետական իշխանության առաջին տարիներին աչքի ընկնող տեղ է գրավում Վ. Ի. Լենինի բազմահարուստ գործունեության մեջ: Մեր հասարակության ամբողջ 60-ամյա պատմությունը հաստատում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի մասին մարքսիզմ-լենինիզմի դրույթների ճշտությունը, ՍՄԿԿ-ի լենինյան ազգային քաղաքականության սկզբունքները և դրանց կենսագործումը: Սա մի այնպիսի նվաճում է, որը ընթեր Լ. Ի. Բրեժնևի բառերով ասած, իրավամբ կարելի է միևնույն շարքում դնել ՍՍՀՄ-ում նոր հասարակության կառուցման այնպիսի հաղթանակների հետ, ինչպիսիք են ինդուստրացումը, կոլեկտիվացումը, կուլտուրական հեղափոխությունը: Աշխարհի առաջին սոցիալիստական պետության փորձը աշխարհի ժողովուրդներին ճշգրտական օրինակ է տալիս մարդկային հասարակության զարգացման ամենաբարդ պրոբլեմներից մեկը՝ ազգային հարցը, հաջողությամբ լուծելու համար:

«Մեծ Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրումը» զեկուցման մեջ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը նշեց, որ Հայաստանում սովետական իշխանության հաղթանակը երկրին բերեց խաղաղություն և ազգային վերածնունդ: Այդ հաղթանակը շրջադարձային կետ եղավ հայ ժողովրդի պատմության մեջ: Միայն սովետական իշխանության լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ հայ ժողովուրդը փրկվեց կործանումից և հնարավորություն ունեցավ ընթանալու բարգավաճման լայն ճանապարհով:

Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Սումբաթզադեն (Բաքու) իր զեկուցման մեջ ցույց տվեց, որ միայն Հոկտեմբերը օգնեց սովետական արևելքի ժողովուրդների ազգային վերածննդին:

«Մեծ Հոկտեմբերը և ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծման միջազգային նշանակությունը» պրոբլեմի մասին խոսեց պատմական գիտությունների դոկտոր Ա. Զուբարյանը (Մոսկվա):

Եղբայրական սոցիալիստական երկրների համար ազգային հարցի լուծման գործում ՍՄԿԿ-ի փորձի նշանակության մասին իրենց զեկուցումներում խոսեցին ակադեմիկոս Շ. Նացակդորժը (ՄԺՀ), պրոֆեսոր Մ. Կրոպիլոկը (ՉՍՍՀ), Վ. Բոժինովը (ԲԺՀ), Մ. Նեդելյան (ՌՄՀ), դոկտոր Բ. Սիզդեկը (ԼԺՀ):

Պրոֆ. Վ. Շմիդտը (ԳԴՀ) նշեց, որ Գերմանական Դեմոկրատական Հանրապետության ազգային շահերը անխզելիորեն կապված են սո-

ցիալիստական համագործակցության երկրների ընդհանուր շահերի հետ: Նա բնաղատեց ազգերի կազմակերպման մասին իմպերիալիստական գրչակների կեղծ հերյուրանքները:

Լատվիական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ա. Բիրոնը, պատմական գիտությունների թեկնածուներ Լ. Կեոզան (ՀԺՀ), Կ. Պոլեշուտսկին (ԲԺՀ), պատմական գիտությունների դոկտոր Խ. Ինոյատովը (Տաշքենդ), լուսաբանեցին ազգային հարցի պատմագրության խնդիրները:

Կոնֆերանսի արդյունքները ամփոփեց ակադեմիկոս Ի. Ի. Մինցը: Նա ասաց, որ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-ամյակին նվիրված գիտական կոնֆերանսը անցավ հաջող: Այն շատ ներկայացուցչական էր: Սովետական գիտնականներից բացի, նրա աշխատանքին մասնակցում էին ութ սոցիալիստական երկրների գիտնականներ, որոնք կարդացին 11 զեկուցում: Մենք, նշեց նա, հարուստ պատկերացում ստացանք այն մասին, թե ազգային հարցը ինչպես է դրված առանձին երկրներում: Թեև ամեն մի նյույթ ունեցող բերում էր իր փաստերը, խոսում իր երկրի առանձնահատկությունների մասին, բայց մեզ ուրախացրեց հայացքների և գնահատականների միասնությունը: Եվ դա պատահական չէ, քանի որ մենք բոլորս մարքս-լենինյան ուղղության պատմաբաններ ենք:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ